ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 24/1039 «20» 09 2023թ.

Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ(ՀՎՀՀ 02242681)
Արտաշիսյան 44/5,28
info@webex.am
+374-96-101017(բջջ.)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ ոստիկանության և «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության միջև 2023 թվականի մարտի մեկին կնքվել է ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ 2023/Գ/ԷԼՌԵԳ ծածկագրով գործարքների իրականացման համակարգչային ծրագրային փաթեթների ծառայությունների մատուցման պայմանագիր: Վերոնշյալ պայմանագրի շրջանակներում 01.09.2023 թվականին մատուցված ծառայությանը տրվել է բացասական եզրակացություն՝ պայմանագրի 2.1.2 կետի ա ենթակետի համաձայն: ՀՀ ՆԳՆ պատասխանատու ստորաբաժանման կողմից առաջարկվել է կատարողին տրամադրել 10 օրյա ժամկետ վերացնելու թերությունները և ներկայացնելու պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություն: 05.09.2023թ-ին «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ Ընկերության կողմից կատարվել են շտկումներ, սակայն, թեսթավորման արդյունքում պարզվել է, որ հանձնված փաթեթը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին՝ հետևաբար տրվել է կրկին բացասական եզրակացություն:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայամանագրի 2.1.3 ա) ենթակետը և 5.2, 5.3 կետերը՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը որոշեց միակողմանի ամբողջությամբ լուծել պայմանագիրը և կիրառել պայմանագրով նախատեսված տույժերը և տուգանքները:

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերությանը առաջարկվում է սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով և

ժամկետներում Բենեֆիցիարին /ՀՀ ՆԳՆ/ վճարումները կատարելու համար՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչությաւն N 900005028106 հաշվեհամարին փոխանցել տուժանքի մասին համաձայանգրերով սահմանված գումարները՝ համապատասխանաբար որակավորման ապահովում 2 820 000 (երկու միլիոն ութ հարյուր քսան հազար), պայմանագրի ապահովում՝ 1 880 000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) և պայմանագրի 5.2 կետի համաձայն հաշվարկված 94 000 /իննսունչորս հազար/ ՀՀ դրամի չափով տուգանք և 141 000 /մեկ հարյուր քառասունմեկ հազար/ ՀՀ դրամի տույժ, հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով: Ուստի տեղեկացնում ենք, որ եթե մինչև սույն թվականի սեպտեմբերի 28-ը ներառյալ «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, հակառակ դեպքում «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ա ենթակետի:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Ա. Ֆիդանյան

Կատարող՝ գնումների համակարգման բաժին
Վ.Մաշկովսկայա
Հեռ. +374 10 59 66 76